https://lurer.com/?p=287811&l=am

17 Մայիս, 2018 21:28

Հրատապ առաջարկություններ ՀՀ ռազմական անվտանգության ամրապնդման վերաբերյալ

2018 թ. Ապրիլյան հեղափոխությունը ջրի երես հանեց վերջին երկուսուկես տասնամյակում երկրում կուտակված սոցիալ-տնտեսական, իրավական, կադրային, սոցիալ-հոգեբանական և այլ կարգի վիթխարի խնդիրներ: Սկզբից ևեթ պետք է ասել, որ ստեղծված ծանրագույն իրավիճակի ողջ պատասխանատվությունն ընկնում է ՀՀ նախկին իշխանությունների, նախ և առաջ հանրապետության նախկին երեք նախագահների և նրանց սպասարկած քաղաքական կուսակցությունների վրա:
Սերժ Սարգսյանի ռեժիմը պահում էր իր իշխանությունը պետական պատժիչ համակարգի հակաօրինական սանձարձակ գործունեության, երկրում հաստատված վախի և անհուսալիության մթնոլորտի, ինչպես նաև բնակչության զանգվածային արտագաղթն ամեն կերպ դրդելու և խրախուսելու շնորհիվ: Ապրիլյան հեղափոխությունը փշրեց հասարակական վախն ու բարոյապես ջախջախեց պատժիչ համակարգը, որը դեռ երկար ժամանակ անկարող է լինելու մեծածավալ բռնամիջոցներ կիրառել անհնազանդ զանգվածների դեմ: Ներկա պայմաններում ուժի կիրառումներ կիցս անցանկալի է, որովհետև այն կարող է, մի կողմից, կատաղի բախումների տեղիք տալ, մյուս կողմից՝ ժողովրդին դարձյալ հուսալքել և արտագաղթի նոր ալիք առաջացնել, մինչդեռ Հայաստանում առանց այդ էլ ժողովրդագրական խոր ճգնաժամ է:

Առաջիկա առնվազն մեկ-երկու տարում Հայաստանի Հանրապետության ներքին քաղաքական իրավիճակը գտնվելու է բարձր մրրկայնության գոտում: Եթե ոմանք կարծում են, թե արտահերթ խորհրդարանական ընտրությունները վերջ են դնելու այս անկայունության շրջանին, ապա նրանք չարաչար սխալվում են: Բանն այն է, որ Հայաստանում օրինաչափորեն սկսվել է հեղափոխության երկրորդ փուլը, որը բնորոշվում է մի քանի խաչվող-հատվող մակարդակներում ընթացող ներքին սուր հակամարտություններով: Այդ մակարդակներն են.

1. *Աշխատավոր զանգվածն ընդդեմ մասնավոր ու պետական գործատուների*: Չունենալով առայժմ առաջնորդող կազմակերպված ուժեր ի դեմս իրենց շահերն արտահայտող քաղաքական կուսակցությունների՝ բնակչության առնվազն 40-50 տոկոսը կազմող չունևոր զանգվածը տարերայնորեն դիմել է ու դեռ դիմելու է դիմադրության տարանջատ, ցաքուցրիվ ու տեղային գործողությունների, որոնք բռնկվելու են այստեղ և այնտեղ՝ ակամա խափանելով բնականոն կենսագործունեությունը երկրի տարբեր հատվածներում, երբեմն սպառնալով ընդունել ավելի ընդարձակ բնույթ:
2. Կիսով չափ տապալված, բայց սկզբունքորեն *դեռ միաձույլ հին քաղաքական ուժն ընդդեմ առայժմ հեղհեղուկ նոր քաղաքական ուժի*, այն է՝ ՀՀԿ-ն ընդդեմ (այս պահի դրությամբ) Նիկոլ Փաշինյանի և նրա շուրջը համախմբվածների: Համաշխարհային հեղափոխական փորձը ցույց է տալիս, որ հին իշխող ուժերը դժվարանում են հաշտվել այն մտքի հետ, որ իրենց ժամանակն արդեն անցել է ու շատ հաճախ փորձում են պատմության անիվը հետ շրջել՝ ընթացքում երկրին պատճառելով մեծ ավեր ու վնաս: Մինչև այսօր ՀՀԿ-ի պահվածքը ցույց է տալիս, որ նրանք ևս ռևանշի հույսեր ունեն ու միայն հարմար պահի են սպասում՝ լինի դա նոր ընտրություններ թե որևէ ֆորսմաժորային իրադրություն: Սա ամենավտանգավոր հակամարտությունն է:
3. *Հին քաղաքական ուժերն ընդդեմ հին քաղաքական ուժերի*: ՀՀ երեք նախկին նախագահները շարունակական գզվռտոցի մեջ են: ՀՀԿ-ն ընդդեմ ՀՀԾ-ի ու նրա արբանյակ խմբերի: ՀՅԴ-ն ու ԲՀԿ-ն տատանվելու են պահի իշխանության և ընդդիմության միջև, եթե զգան, որ վերջինս ուժ է հավաքում:
4. Սպասվող *ներքին պառակտումներ ու վերադասավորումներ* բոլոր քաղաքական կուսակցություններում ու խմբավորումներում:
5. Երկրում առկա համախառն հարստության, կապիտալի և եկամուտների վերաբաշխման համար մղվելու է անխնա պայքար ինչպես օլիգարխների միջև, այնպես էլ գուցե պետության և օլիգարխների միջև:
6. Հակամարտության վերոնշյալ բոլոր մակարդակներում ներկա են լինելու Միացյալ Նահանգներն ու Ռուսաստանը, ինչպես նաև տարածաշրջանային այլ ուժերը, որոնք իրենց հակադիր շահեր հետապնդող բացահայտ ու գաղտնի գործողություններով կարող են է՛լ ավելի բարդացնել ու ապակայունացնել իրավիճակը:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության ղեկավարությունն ու ժողովուրդը որքան էլ ցանկանան խուսափել ներքին ցնցումներից, դա

նրանց դեռ որոշ ժամանակ ամբողջությամբ չի հաջողվելու: Ապահովագրված չենք նաև ցավալի միջադեպերից ու բախումներից: Չմոռանանք նաև, որ խորքային սոցիալական ու քաղաքական նույն խնդիրներն առկա են նաև Արցախում, ուստի ներքին իրավիճակն այնտեղ էլ այս կամ այն չափով կարող է ինչ-որ պահի սրվել: Բարեբախտաբար, առայժմ Արցախը կարողացել է զերծ մնալ հայաստանյան թոհուբոհից:
Հայաստանի համար այս ծայրահեղ բարդ պայմաններում Ադրբեջանում բնական գայթակղություն է առաջանալու՝ լուծել ղարաբաղյան հիմնախնդիրը ռազմական ճանապարհով՝ դիմելով լայնածավալ հարձակման: Այդ մասին Բաքվում արդեն իսկ արվում են պաշտոնական հայտարարություններ, բերվում են վերլուծաբանական հիմնավորումներ:

Ահա այստեղ էլ առաջանում է մեզ համար ամենակարևոր հարցը՝ ինչպե՞ս զսպել ադրբեջանական հնարավոր ագրեսիան, ինչպե՞ս անել, որ ՀՀ անվտանգության համակարգը, հատկապես Զինված Ուժերն ու ԱԱԾ-ն գործեն անխափան՝ մնալով հնարավորին չափ մեկուսացված ներքին անխուսափելի քաղաքական ու սոցիալական վայրիվերումներից:

Ճիշտ է, այս կենսական նշանակություն ունեցող կառույցների երկու նորանշանակ ղեկավարներն էլ երկար տարիներ աշխատել են նրանցում ու ծանոթ են իրենց գործին: Այդուամենայնիվ պատերազմական կամ նախապատերազմական վիճակում գտնվող երկրում, երբ բարձրագույն քաղաքական իշխանությունը թաղված է այլևայլ ընթացիկ ծանր խնդիրների մեջ, այս կառույցներում անհրաժեշտ է ունենալ ոչ միայն մենեջերներ, այլ առաջնորդի տիպի ղեկավարներ: Ցավոք, ոչ մեկը, ոչ էլ մյուսն այդպիսին չէ. Դավիթ Տոնոյանը դաշտային հրամանատար երբևէ չի եղել, ըստ այդմ էլ՝ բանակում չունի առաջնորդի համբավ, թեև գուցե կարող է լինել հրաշալի մենեջեր-նախարար (ինչը դեռևս անհայտ է): Իսկ Արթուր Վանեցյանը ԱԱԾ-ում զբաղեցրել է հարաբերականորեն ցածր պաշտոններ (ԱԱԾ Երևանի քաղաքային վարչությունում խոշոր գործողություններ չեն ծրագրվում և իրականացվում), ըստ այդմ՝ նա էլ չի կարող անմիջապես ու բոլոր նրբություններով տիրապետել իրեն վստահված բարդ բնագավառին, թեև հետագայում գուցե իրոք հրաշալի տնօրեն լինի (որ նույնպես անհայտ է):

Խնդիրը բարդանում է նրանով, որ ո՛չ ՀՀ վարչապետը, ո՛չ փոխվարչապետները (որոնք, ի դեպ, Անվտանգության խորհրդի 10-11 հոգանոց կազմի անդամ են) ռազմական գործում և ազգային անվտանգության ոլորտում երբևէ չեն մասնագիտացել ոչ գործնական, ոչ էլ տեսական առումներով:

Ակնհայտ է, որ ԶՈՒ և ԱԱԾ-ում զգացվելու է առաջնորդության որոշակի պակաս, որն անհրաժեշտ է շտապ լցնել՝ այդ կառույցների ղեկավարության հեղինակությունն ու մասնագիտական քաշն ավելացնելով ու ամրացնելով: Բայց ինչպե՞ս կարելի է դա անել՝ չփոխելով նորանշանակ ղեկավարներին, որոնք, ըստ ամենայնի, վայելում են Ն. Փաշինյանի վստահությունը, ինչը նույնպես կարևոր գործոն է պետության արդյունավետ կառավարման համար:

Ստորև ՀՀ վարչապետին առաջարկում եմ քննարկել այն միջոցներից մի քանիսը, որոնք, ըստ իս, կարող են էականորեն նպաստել վերոնշյալ խնդիրների լուծմանը՝ բարձրացնելով ուժային կառույցների ղեկավարության հեղինակությունն ու աշխատանքային արդյունավետությունը.

Ա. Մոսկվայից շտապ հետ կանչել խորհրդային հայտնի զորահրամանատար, ՀՀ ՊՆ գլխավոր շտաբի նախկին պետ (1992-1995 թթ.), 1993 թ. պաշտպանության նախարարի պաշտոնակատար, գեներալ-լեյտենանտ Նորատ Տեր-Գրիգորյանցին ու նշանակել նրան ռազմական հարցերի գծով ՀՀ վարչապետի գլխավոր խորհրդական՝ լայն լիազորություններով: Կարծում եմ, տարեց հայ հերոսը պատրաստակամորեն կընդառաջի դժվար վիճակում հայտնված Հայաստանի կոչին ու դրական պատասխան կտա: Լեգենդար զորավարի ներկայությունը Հայաստանում՝ առավել ևս ժողովրդականություն վայելող ՀՀ վարչապետի կողքին մեծ ոգևորություն ու վստահություն կհաղորդի ինչպես բանակին, այնպես էլ ժողովրդին: Նորատ Տեր-Գրիգորյանցն իր մասնագիտական խորհուրդներով մեծապես կօգնի թե՛ վարչապետին, թե՛ ՀՀ պաշտպանության նախարարին, թե՛ ԶՈՒ գլխավոր շտաբին:

Բ. Այս կամ այն իրավական ձևակերպումով (օրինակ, Առաջին հանրապետության 100-ամյա տարելիցի կապակցությամբ) շտապ ներում շնորհել ԼՂՀ Ինքնապաշտպանության բանակի 1993-1999 թթ. հրամանատար, գեներալ-լեյտենանտ Սամվել Բաբայանին: Այնուհետև, Արցախի ղեկավարության հետ համաձայնեցնելով, գործուղել նրան Ստեփանակերտ՝ ստանձնելու Արցախի նախագահի ռազմական հարցերով գլխավոր խորհրդականի պաշտոնը: Ս. Բաբայանի առջև, սակայն, մեկ պայման պետք է դնել. առաջիկա տարիներին՝ քանի դեռ Հայաստանի դրությունը չի կայունացել, հրաժարվել քաղաքական գործունեության ծավալումից և ամբողջությամբ նվիրվել հայոց բանակին: Կարծում եմ, Արցախի հերոսն ուրախությամբ կստանձնի այդ առաքելությունը:

Գ. ԱԱԾ նորանշանակ տնօրենին կից ստեղծել վերջին տարիներին (հատկապես նախկին տնօրեն Գ. Կուտոյանի օրոք) պաշտոնաթող եղած ԱԱԾ բարձրաստիճան սպաներից բաղկացած խորհրդակցական մի ժամանակավոր մարմին, որն իր գործունեությունը կդադարեցնի որոշ ժամանակ անց՝ երկրի վիճակի կայունացումից հետո:

Դ. Անվտանգության խորհրդի քարտուղար նշանակված հրապարակախոս Արմեն Գրիգորյանի տեղակալի գործառույթներն իրականացնողի պաշտոնում նշանակել ազգային-պահպանողական դիրքորոշումներով հայտնի հեղինակավոր այնպիսի մի մասնագետ գործչի, որը հասարակության լայն շրջանների ու քաղաքական ուժերի համար հասկանալի և ընդունելի կլինի: Ախ քարտուղարի այդպիսի տեղակալը կդիտվի որպես մի փոքր հակակշիռ արևմտամետ հկ-ական միջավայրից դուրս եկած ՀՀ կառավարության երիտասարդ անդամներին: Չէ՞ որ Նիկոլ Փաշինյանն վերջիվերջո խոսում էր համաձայնության կառավարության մասին:

Այս նշանակումները կարող են զգալիորեն բարձրացնել կառավարության ուժային խմբավորման կշիռն ու հեղինակությունը, ինչն այսօր հույժ անհրաժեշտ է: Մասնավորապես, Նորատ Տեր-Գրիգորյանցի և Սամվել Բաբայանի պես լեգենդար ռազմական գործիչների հայտնվելը հայոց ղեկավարության կողքին սառը ցնցուղ կլինի Բաքվի պատերազմատենչ ղեկավարության գլխին:

Հայաստանին ժամանակ է պետք է ներքին ճգնաժամն հաղթահարելու համար: Հայկական բանակի և անվտանգության մարմինների վրա մեծ պատասխանատվություն է դրված՝ նրանք են այդ ժամանակը շահելու գլխավոր երաշխավորը:

Հասկանալի է նաև, որ դիվանագիտական խողովակներով պետք է աշխատել ԱՄՆ-ի, Ռուսաստանի, ինչպես նաև Եվրոպական Միության ու Իրանի հետ, այն հաշվարկով, որ նրանք ևս օգտագործեն Իլհամ Ալիևի վրա իրենց ունեցած ողջ ազդեցությունը՝ հետ պահելով նրան Հայաստանի (ներառյալ Արցախի) դեմ պատերազմ սանձազերծելու հնարավոր մտադրությունից:

Արմեն Այվազյան,
քաղաքական գիտությունների դոկտոր